

**Տ. ԱՐԵՎԱԿ ԵՊԻՄԿՈՂՈՍ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(23 հունվարի 2005 թ.)

Միքսի եղբայրներ, այսօր ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնավոր գնորհնությամբ՝ Պատրարքի սրբազն արարողության ընթացքին կապարելու ենք հոգեհանգստյան արարողություն՝ ի հանգիստ 1990 թ. Բարգում զոհված հայերի հոգիների, և ահա նախախնամական է, որ մեր Հայրերի իմաստուն գնորհնությամբ սուրբքրային այսօրվա ընթերցվածում Եսայի մարգարեի շրթներով Տիրոց ուղղված խորությամբ ասվում է. «Դու ես մեր Ասքվածը, Դու ես մեր Տերը: Ոչ Աքրահամը, ոչ Խսահակը ջասակացան ու ճանաչեցին մեզ, այլ Դու, Դու միայն ճանաչեցիր մեզ և կարող ես փրկել մեզ բոլոր դժևակի փորձություններից, քանզի Ձու անունն է մեզ վրա»:

Զանի՞-քանի անզամներ մեր ժողովուրդը որպես հավաքականություն, այլևս հոգնելով և հուսախար լինելով մարդկանց շարքերում Ասքծուն փնտրելուց, վերսպիս դարձել է դեպի ճշմարիդ ասքվածնանաշնորհություն. Վերսպիս դարձել է դեպի Ասքված և իր հոգսերը, իր ցավերը, իր դատապաններն ու ողբերգությունները պարմել Նրան՝ Վերսպիս հասպաքելով, որ Ասքված է իր Տերը: Ոչ ոք, նաև նրանք, ովքեր որ սկեղծեցին ազգերի կարծեցյալ եղբայրության ներքո մի հսկա բռնապեսություն, ի զորու չէին ազգերի և ժողովուրդների միջև առաջացնել եղբայրության, բարեկամության իրական համագործակցության ոգի:

Չնա այդպիսին էր այն համակցությունը, բռնի համակցությունը, որ կոչվում էր Սովետական Միություն, որի լույսայն հայացքի ներքո գույքին 1988 թվականից, երբ մեր ժողովուրդը եերոսական ջանքերով, եերոսական մաքառումների գնով գնում էր այն ճանապարհով, որի բարձունքն անկախության ու ազագության լոյսն էր, ահա այդ դարիներին բռնիորնեն, ոճրագործ ճանապարհներով փորձ արվեց կասեցնել մեր ժողովուրդի ընթացքը:

Համառուր թվարկումն իսկ այն ողբերգությունների, այն հալածանքների, որոնք դեղի ունեցան մեր ժողովուրդի զավակների հետ, բավական է, որպեսզի ցանկացած թերահավաք, ցանկացած դարակույս ունեցող անձ խոնարհեցնի իր զույսը կամքի և փոկունության առջև այն ժողովուրդի, որի զավակները լինելու պարեհությունը, պատրիկը և կոչումը ունենք մենք ամենք: 1988-ի աեռելի երկրաշարժ, Սումգայիթի, Կիրովարադի ոճրագործություններ և ահա այս ողբերգական շղթայի օղակում ևս մեկ ոչ պակաս քարմելի, ոչ պակաս սահմուկեցուիչ մի դեսարան՝ Բարքի ջարդերը, ջարդերը, որոնց ցավն արդեն դասնիհնգ դարիներ ուղեկից է մեր ժողովուրդին, որոնց Վերեբը դարձակի սպիտակագույն չեն:

Ականատեսների վկայությամբ, այդ օրը՝ հունվար 13-ի գիշերը, հարյուրավոր անձեր, հարյուրավոր հայեր ենթարկվեցին սոսկակի դաշտանքների ու չարչարանքների ու նահաւակության պսակն ընդունեցին: Մի ամերիկացի դիվանազեն պարմում է, թե ինչպես ծերանցից դաշտանքու ծերեր ուղակի կենդանիորնեն, ողջ-ողջ թաղվեցին, ուրիշներ պարմում են, թե ինչպես խուժանը կրակի շորջը հավաքված դաշտանում էր հաջորդ իր ջարդն ու կո-

դոպուրն սկսելոց առաջ: Եվ ահա՝ ինչպես չխամսմափել այս երևոյթը հրեշավորության հետ, ինչպես չաղերսել 1915 թվականի տոսկալի Յնդասպանությանը, ինչպես վերսպին այն չորակի որպես Յնդասպանություն:

Մեզ սպանում էին ոչ թե մեր կրոնական պարկանելության համար, և ոչ թե նրա համար, որ մենք եղբայրասպան ենք իրքն Կայենը և ոչ էլ Տիրասպան՝ որպես Հոդան, այլ մեզ սպանում էին մեկ բանի համար, որովհետո մենք հայ ենք, քրիստոնյա ենք, և ոչ որ չէր կարող մեզ վրա դադապարփռության կնիք դնել որպես դավաճանի և որպես Տյառնասպանի և կամ եղբայրասպանի:

Մեր դադապարփռությունը մենքն էր: Այն էր, որ մենք պարկանում էինք մի ժողովրդի, որին կրում են հայ: Եվ ահա այսօր մենք, համախմբված այս սուրբ դաճարում, Վեհափառ Հայրապետի բարձր հովանու ներքո, կոչված ենք աղոթելու, կոչված ենք մեր հայացքները դեպի վեր բարձրացնելու՝ հանգստություն հայցերու հոգիներին այն նահապակաց, ովքեր որ այդ օրերին իրենց հոգին ավանդեցին: Մենք հավաքում ենք, որ Վազգեն Վեհափառի խոսքնով՝ մահք դատնում է նախերզանքը հավիրենական կյանքի, մենք հավաքում ենք, որ մահք ամենասարսափելին չէ, որ կարող է կափարվել քրիստոնյայի հետ, բայց նաև հավաքում ենք, որ այն ձեռքերը, որ ի գորու են կրթել Ասրծո կողմից պարզևած կյանքի թելը, այդ ձեռքերը շապ շուրջով պիտի չորանան:

Մենք հավաքում ենք նաև, որ Ասրծած, որ Իր հովանին դարածում է ինչպես արդարների, այնպիս և մեղավորների վրա, որ պիտի լինի ինչպես մեզ՝ ապրողներիս ու ողջերիս, այնպիս և մահացածներին, և մենք մի օր վերսպին պիտի հանդիպենք մեր նահապակաված, զոհված, սպանողի ենթարկված քոյրերի, եղբայրների, մանուկների ու ծերերի հետ: Թող Ասրծո ամենախնամ Աջը ծշփապես հովանի լինի ամենքիս, միսիթարություն բերի մեզ հավաքարք, և թող մեր պարմության դառը փորձառություն վկայություն լինի մեզ, որ մենք պետք է համախումք լինենք, պետք է դարակույսներ չունենանք դեպի հայրանակ զնալու մեր ճանապարհին, չարծեզրկենք այն բոլոր հալածանքներն ու դժբախտությունները, որոնք որ բաժին հասան մեզ դեպի անկախություն և ազագություն մեր հայրաշարավի ճանապարհին: Թող Ասրծած ամենողորդ իր սիրով, ամենազոր Իր Աջով մեզ ամենքիս միսիթարություն պարզեի և հանգստություն բերի զոհված հոգիներին:

«Յիշարակն արդարոց օրինութեամբ եղիցի. ամէն:»